ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/77-1

ք. Երևան «07» 07 2021թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր՝ Վ. Ուռուտյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Տ. Ղարիբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 131070 /մեկ հարյուր երեսունմեկ հազար յոթանասուն/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը	«Սմարթլայն» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 110
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Հայբիզնեսբանկ» ՍՊԸ
Հ/Հ 247010053103	Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01507028	ՀՎՀՀ 01548908
Ռեկտոր՝ ---------- Վ. Ուռուտյան	Տնօրեն՝ ---------- Տ. Ղարիբյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«07» 07 2021թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/77-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ* - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը ***	տեխնիկական բնութագիրը	չ/մ	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
6	30192130/2	Մատիտ սև	Pencil; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Արտաքին տեսքը՝ սև փայտյա սրած, գրաֆիտով և ռետինով, պատված ջրադիմացկուն ներկով, կարծրությունը HB: Միջուկը՝ որակյալ, չփշրվող, մատիտի երկարությունը՝ 17-19 սմ:	հատ	30	17	510	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	17	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
7	30192100/2	Ռետին	Eroser; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Ջնջոց՝ փափուկ ռետինից, նախատեսված մատիտով գրածները առանց հետքերի ջնջելու համար, երկարությունը՝ առնվազն 4սմ, հաստությունը՝ առնվազն 1սմ, լայնությունը՝առնվազն 1,5սմ:	հատ	90	7	630	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	7	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
8	30192133/2	Սրիչ	Sharpener; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Պլաստմասսե սրիչ, նախատեսված գրաֆիտե մատիտներ սրելու համար, պահոցով, շեղբը՝ ամուր մետաղից, սրված:	հատ	70	6	420	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	6	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
9	30192121/4	Գրիչ գնդիկավոր կապույտ	Pen; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Գրիչ գնդիկավոր, միջուկը յուղային հիմքով, իրանը պլաստմասե,կափարիչով:Առնվազն 200մ. անխափան գրելու հնարավորությամբ:Միջուկի հաստությունը 0.7մմ,գույնը՝ կապույտ:	հատ	90	46	4140	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	46	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային

											օրվա ընթացքում
16	30199420/2	Թուղթ նշումների համար սոսնձվացքով	Memo paper; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Արտաքին տեսքը՝ 75x75մմ չափսի դեղին կպչուն, բարձր սոսնձվածքով, գրելու համար, սոսնձվածքը 1,25 սմ-ից ոչ պակաս: Փաթեթավորված, թղթերի քանակը 1 փաթեթի մեջ՝ առնվազն 100 հատ:	հատ	120	6	720	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	6	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
19	30197231/2	Ֆայլ	Impulse, Իմպուլս-Ա ՍՊԸ	Արտաքին տեսքը՝ A4 ձևաչափի ֆայլ-ներդիր, նախատեսված է տպագրված փաստաթղթերի պահպանման և պաշտպանման համար: Մակերևույթը թափանցիկ է, հարթ: Պատրաստված է պոլիպրոպիլենային թաղանթից (40 միկրոն): Կողային պերֆորացիան հարմարեցված է տարբեր տեսակի արագակարների համար: Փաթեթավորումը 100 ֆայլ:	հատ	10	4100	41000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	4100	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
22	30197323/1	Կարիչ մեծ	Stapler; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Գրասենյակային կարիչ, 100 թերթ 80գր խտության թղթի թերթերը 23/6, 23/8, 23/10, 23/13 համարների մետաղալարե կապերով ամրացնելու համար:	հատ	6500	1	6500	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
34	30193200/1	Թղթադարան	Desk tray; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Արտաքին տեսքը՝ սեղանի թղթադիր դարակ, մետաղական, հորիզոնական, A4 ֆորմատի թղթերի համար, 3 հարկանի, սև գույնի:	հատ	2400	2	4800	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
50	30192125/5	Մարկեր	Marker; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Նախատեսված է գրավոր տեքստերը ընդգծելու, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրով, ծայրի լայնությունը՝ 4 մմ: Պերմանենտ: Չլինի չորացած,ըստ նշանակության օգտագործելու համար պիտանի:Գույնը ըստ պատվիրատուի պահանջի:	հատ	160	10	1600	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
53	30197340/2	Ապակարիչ	Remover; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Գրասենյակային ապակարիչ հարմարավետ էրգոնոմիկ պլաստիկե բռնակով,աշխատող մասը՝ մետաղյա: N10, N24, N26 և N26.6 ասեղներով կարված թղթի դարսը քանդելու համար:	հատ	150	5	750	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում

54	39263410/2	Ամրակ փոքր	Paper clip; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Գրասենյակային փոքր մետաղական ցինկապատ ամրակներ: Թղթե դարսերը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ, առանց վերջիններս վնասելու, չեն քայքայվում: Երկարությունը՝առնվազն 28մմ: Հաստությունը՝ առնվազն 0,8մմ, լայնությունը առնվազն՝ 6մմ: Տուփի մեջ՝ 100 հատ:	հատ	80	25	2000	<<, ք.Երևան, Տերյան 74	25	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
55	39263510/3	Սեղմակ փոքր	Binder clip; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Գրասենյակային սեղմակ զսպանակային, գույնը՝ սև մետաղի ներկը կայուն, 15 մմ լայնությամբ , նախատեսված մինչև 40 թերթ ամրացնելու համար: Ստվարաթղթե տուփի մեջ 12 հատ:	հատ	10	360	3600	<<, ք.Երևան, Տերյան 74	360	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
56	39263520/2	Սեղմակ միջին	Binder clip; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Գրասենյակային սեղմակ զսպանակային, գույնը՝ սև մետաղի ներկը կայուն, 19 մմ լայնությամբ , նախատեսված մինչև 60 թերթ ամրացնելու համար: Ստվարաթղթե տուփի մեջ 12 հատ:	հատ	10	360	3600	<<, ք.Երևան, Տերյան 74	360	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
57	39263530/3	Սեղմակ մեծ	Binder clip; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Գրասենյակային սեղմակ զսպանակային, գույնը՝ սև մետաղի ներկը կայուն, 25 մմ լայնությամբ , նախատեսված մինչև 100 թերթ ամրացնելու համար: Ստվարաթղթե տուփի մեջ 12 հատ:	հատ	15	360	5400	<<, ք.Երևան, Տերյան 74	360	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
63	39292110/1	Գրատախտակ	Board; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Մագնիսա-մարկերային , ալյումինե շրջանակով գրատախտակ մարկերով գրելու համար: Միակողմանի,պատին ամրացվող, չափը՝ 120սմ x 90սմ:	հատ	13000	2	26000	<<, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
64	30193200/2	Թղթադարան	Desk tray; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Արտաքին տեսքը՝ սեղանի թղթադիր դարակ, մետաղական, հորիզոնական, A4 ֆորմատի թղթերի համար, 3 հարկանի, սև գույնի:	հատ	2400	6	14400	<<, ք.Երևան, Տերյան 74	6	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
66	30197234/2	Թղթապանակ /ռեգիստր/	Bax file; AL PASSO GENERAL	Թղթապանակ երկօղականի սև կոշտ ստվարաթղթե կազմով, 340 x 270 x 40 մմ չափերով, ամրացման մետաղյա հարմարանքով, A4 ձևաչափի թղթերի համար: Կազմը՝ 2-4 մմ	հատ	600	10	6000	<<, ք.Երևան, Տերյան 74	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20

			TRADING CO.LLC	հաստությամբ ստվարաթղթից: Չափսերի թույլատրելի շեղումը՝ 3 %:							օրացույցային օրվա ընթացքում
67	30197234/3	Թղթապանակ /ռեգիստր/	Bax file; AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Թղթապանակ երկօղականի սև կոշտ ստվարաթղթե կազմով, 340 x 270 x 80 մմ չափերով, ամրացման մետաղյա հարմարանքով, A4 ձևաչափի թղթերի համար: Կազմը՝ 2-4 մմ հաստությամբ ստվարաթղթից: Չափսերի թույլատրելի շեղումը՝ 3 %:	հատ	600	15	9000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	15	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում

* «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը: **Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, անհրաժեշտության դեպքում՝ գործարանային փաթեթավորմամբ: Տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է մատակարարը:**

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

*** Հրավերով նախատեսվում է մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, եթե վերջիններս կիրառելի են առաջարկվող ապրանքներ համար:

Յուրաքանչյուր անվանատող հանդիսանում է առանձին չափաբաժին:

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ _____ Վ. Ուռուտյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՍՊԸ
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908

Տնօրեն՝ _____ Տ. Ղարիբյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«07» 07 2021թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/77-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Ապրանքի անվանումը	Չ/մ	Ընդհանուր քանակը	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.՝ ըստ ամիսների, այդ թվում*												
					I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Գումար
6	30192130/2	Մատիտ սև	հատ	17	-	-	-	-	-	-	510	510	510	510	510	510	**510**
7	30192100/2	Ռետին	հատ	7	-	-	-	-	-	-	630	630	630	630	630	630	**630**
8	30192133/2	Սրիչ	հատ	6	-	-	-	-	-	-	420	420	420	420	420	420	**420**
9	30192121/4	Գրիչ գնդիկավոր կապույտ	հատ	46	-	-	-	-	-	-	4140	4140	4140	4140	4140	4140	**4140**
16	30199420/2	Թուղթ նշումների համար սոսնձվացքով	հատ	6	-	-	-	-	-	-	720	720	720	720	720	720	**720**
19	30197231/2	Ֆայլ	հատ	4100	-	-	-	-	-	-	41000	41000	41000	41000	41000	41000	**41000**
22	30197323/1	Կարիչ մեծ	հատ	1	-	-	-	-	-	-	6500	6500	6500	6500	6500	6500	**6500**
34	30193200/1	Թղթադարան	հատ	2	-	-	-	-	-	-	4800	4800	4800	4800	4800	4800	**4800**
50	30192125/5	Մարկեր	հատ	10	-	-	-	-	-	-	1600	1600	1600	1600	1600	1600	**1600**
53	30197340/2	Ապակարիչ	հատ	5	-	-	-	-	-	-	750	750	750	750	750	750	**750**
54	39263410/2	Ամրակ փոքր	հատ	25	-	-	-	-	-	-	2000	2000	2000	2000	2000	2000	**2000**
55	39263510/3	Սեղմակ փոքր	հատ	360	-	-	-	-	-	-	3600	3600	3600	3600	3600	3600	**3600**
56	39263520/2	Սեղմակ միջին	հատ	360	-	-	-	-	-	-	3600	3600	3600	3600	3600	3600	**3600**
57	39263530/3	Սեղմակ մեծ	հատ	360	-	-	-	-	-	-	5400	5400	5400	5400	5400	5400	**5400**
63	39292110/1	Գրատախտակ	հատ	2	-	-	-	-	-	-	26000	26000	26000	26000	26000	26000	**26000**
64	30193200/2	Թղթադարան	հատ	6	-	-	-	-	-	-	14400	14400	14400	14400	14400	14400	**14400**
66	30197234/2	Թղթապանակ /ռեգիստր/	հատ	10	-	-	-	-	-	-	6000	6000	6000	6000	6000	6000	**6000**
67	30197234/3	Թղթապանակ /ռեգիստր/	հատ	15	-	-	-	-	-	-	9000	9000	9000	9000	9000	9000	**9000**

Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի
համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 30.12.2021թ.:
Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով և հրավերում ներկայացվելու են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվելու է կոնկրետ գումարի չափ:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը	«Սմարթլայն» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 110
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Հայբիզնեսբանկ» ՍՊԸ
Հ/Հ 247010053103	Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01507028	ՀՎՀՀ 01548908
Ռեկտոր՝ _____ Վ. Ուռուտյան	Տնօրեն՝ _____ Տ. Ղարիբյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 3
« » _____ 2021թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/77-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » _____ 2021թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/77-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն